ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/133

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16121-18 գրությամբ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի 04.09.2018թ. թիվ 446 գրության հիման վրա, 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16121-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էկո Կենտրոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.09.2018թ. գրությամբ հայտնել է, որ Նոր Երզնկա համայնքի կողմից 25.01.2018թ. կնքված «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» պայմանագրի լուծարումը կրում է սուբյեկտիվ և ոչ հիմնավոր բնույթ, քանի որ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ն կատարել է իր բոլոր պարտականությունները, ինչն ապացուցվում է աղբահանության ծառայությունների մատուցման կանոններով, պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրություններով, պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրելու վերաբերյալ ակտերով և իրենց կողմից ծառայությունների դիմաց կատարած վճարումներով:

Ընդ որում, Նոր Երզնկա համայնքի ղեկավարությունը որևէ ձևով (գրավոր և բանավոր) Ընկերությանը տեղյակ չի պահել պայմանագիրը լուծելու վերաբերյալ: Ավելին, այդ ժամանակահատվածում որևէ անգամ չի ներկայացրել իր դժգոհությունը Ընկերության մատուցած ծառայությունների վերաբերյալ:

«Էկո Կենտրոն» ՍՊԸ-ն Արագածոտնի մարզում կառուցել և ավելի քան 3 տարի շահագործում է կենցաղային թափոնների համար նախատեսված աղբավայրը՝ ապահովելով կենտրոնացված աղբահանություն և աղբի ճիշտ պահեստավորում:

«Էկո Կենտրոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինս թափոնների հավաքման, տեղափոխման և աղբավայրում ընդունման պահեստավորման ծառայություններ է մատուցում Աշտարակի քաղաքապետարանին, 16 համայնքների և այլ անձանց: Հաշվի առնելով Նոր Երզնկա համայնքի սուբյեկտիվ մոտեցումը և պայմանագրի միակողմանի անհիմն լուծումը, ինչպես նաև Ընկերության գործունեության բնականոն ընթացքն ապահովելու կարևորությունը, Ընկերությունը խնդրել է «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/133 ընթացակարգի շրջանակներում 10.09.2018թ. ժամը 10:15-ին, 12.09.2018թ. ժամը 10:15-ին և 19.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.09.2018թ. թիվ 446 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի կարիքների համար 2018թ. հունվարի 25-ին «Նոր Երզնկա համայնքի կենցաղային աղբահանության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի, կողմից առաջարկվող ծառայության տեխնիկական բնութագիրն էականորեն տարբերվում է հրավերով ծառայության տեխնիկական բնութագրից: Նշված մասնակցին տրվել է հնարավորություն շտկելու ծառայության անհամապատասխանությունները, սակայն վերջինս հրաժարվել է համապատասխան ծառայությունները կատարելուց:

Մեկ այլ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքված «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով աղբահանության ծառայության մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սույն թվականի փետրվար ամսից իրականացվել է որակի և ժամանակացույցի խախտումներով, որի վերաբերյալ պարբերաբար զգուշացվել է ծառայությունն իրականացնող մարմնին (ծանուցում 29.03.2018թ.), ստանալով բնակչության կողմից արդարացի դժգոհություններ, համայնքապետարանը համոզվելու համար շրջայցեր է կատարել «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից սպասարկող տարածքներում և համոզվել է, որ բնակչության բողոքը տեղին է, որն էլ առաջացել է աղբահանության վճարների թերհավաքագրում: Համայնքապետարանը Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարել է պատշաճ կերպով և համաձայն հանձնման-ընդունման արձանագրությունների «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ին մինչև սույն թվականի հուլիս ամիսը ներառյալ մատուցված ծառայության դիմաց վճարվել է 834 000 ՀՀ դրամ: Օգոստոս ամսին համայնքում դադարեցրեցին աղբահանության ծառայություն մատուցել պատճառաբանելով մեքենայի անսարքությունը: Ընկերությունը հրավիրվել է համայնքապետարան քննարկումների համար, սակայն Ընկերությունը չի ներկայացել, չեն պատասխանում պարբերաբար հեռախոսազանգերին, գրավոր

ծանուցումներն իրենց չեն հասել, քանի որ իրենց կողմից փաթեթում նշված էլեկտրոնային հասցեն և իրավաբանական հասցեն ճիշտ չեն:

Ուստի Պատվիրատուն, ղեկավարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջներով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջներով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/133 ընթացակարգի շրջանակներում 10.09.2018թ. ժամը 10:15-ին, 12.09.2018թ. ժամը 10:15-ին և 19.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի և «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի միջև 25.01.2018թ. կնքվել է աղբահանության ծառայության մատուցման թիվ «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով պայմանագիրը, որի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մինչև 31.12.2018թ. Պատվիրատուին մատուցել աղբահանության ծառայություններ:

2. Ընկերությանն ուղղված 22.08.2018թ. թիվ 427 գրությամբ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16121-18 գրությունը, ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի 04.09.2018թ. թիվ 446 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի և «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի միջև 25.01.2018թ. կնքվել է աղբահանության ծառայության մատուցման թիվ «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մինչև 31.12.2018թ. Պատվիրատուին մատուցել ընդհանուր 1 440 000 ՀՀ դրամի աղբահանության ծառայություններ:

19.07.2018թ. կողմերի միջև կնքվել է «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն Պայմանագրի գինը սահմանվել է ընդհանուր 1 584 000 ՀՀ դրամ:

Ընկերությանն ուղղված 28.03.2018թ. գրությամբ Նոր Երզնկա համայնքը հայտնել է, որ Ընկերության կողմից բազմիցս խախտվել է Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Պատվիրատուն նույն գրությամբ հայտնել է, որ ծառայությունը մատուցվում է անպատշաճ որակի և ժամկետների խախտումներով, ուստի Պատվիրատուն առաջնորդվում է Պայմանագրի 2.2.1 կետով, այն է՝ պատվիրատուն պարտավոր է ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ գրավոր հայտնել կատարողին: Պատվիրատուն հայտնել է նաև, որ Ընկերության կողմից հիմնավորումներ ունենալու դեպքում, քննարկման համար վերջինս կարող է ներկայանալ Նոր Երզնկա համայնքապետարան:

Կողմերի միջև 01.03.2018թ., 03.04.2018թ., 03.05.2018թ., 04.06.2018թ., 02.07.2018թ., 01.08.2018թ. կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ Ընկերությունը հունվար-հուլիս ամիսները ընկած ժամանակահատվածի ընթացքում Պատվիրատուին մատուցել է և Պատվիրատուի կողմից ընդունվել է Պայմանագրով նախատեսված աղբահանության ծառայությունները:

Ընկերությանն ուղղված 22.08.2018թ. թիվ 427 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի համաձայն Նոր Երզնկա համայնքում Ընկերության կողմից աղբահանության մատուցման ընթացքում բազմիցս խախտվել է Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Ծառայությունը մատուցվում է անպատշաճ որակի և ժամկետների խախտումներով, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, Նոր Երզնկայի համայնքապետարանը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Այսպես՝ Պայմանագրի 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ն ստանձնել է Նոր Երզնկա համայնքի կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2-րդ ենթակետով նախատեսվել է, որ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրն, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 3-րդ կետի 3.2-րդ կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի

կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցներ.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն Պատվիրատուն իրավունք ունի.

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը:

Այսպիսով՝ Ընկերությանն ուղղված 28.03.2018թ. գրությամբ Նոր Երզնկա համայնքը հայտնել է, որ Ընկերության կողմից բազմիցս խախտվել է Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, ծառայությունը մատուցվում է անպատշաճ որակի և ժամկետների խախտումներով:

Միևնույն ժամանակ կողմերի միջև 03.04.2018թ., 03.05.2018թ., 04.06.2018թ., 02.07.2018թ., 01.08.2018թ. կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից մինչև հուլիս ամիսը ներառյալ Պատվիրատուին մատուցվել են աղբահանության ծառայություններ:

Պայմանագրի 2.2-րդ կետի 2.2.1 ենթակետը սահմանում է, որ պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, ***իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կատարողին:***

Արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը լուծելուց առաջ չի կիրառվել Պայմանագրի 2.2-րդ կետի 2.2.1 ենթակետով նախատեսված դրույթը, որի համաձայն՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին անհամապատասխան մատուցված ծառայության վերաբերյալ պատվիրատուն պարտավոր է անմիջապես տեղեկացնել Ընկերությանը, այլ Ընկերությանն ուղղված 22.08.2018թ. թիվ 427 գրությամբ Պատվիրատուն լուծել է պայմանագիրը:

Դրա հետ մեկտեղ Պայմանագրով սահմանված է, որ եթե պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, ապա հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցներ (չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը, կամ հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը).

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Ինչ վերաբերում է 28.03.2018թ. ծանուցմանը, ապա կողմերի միջև 03.04.2018թ., 03.05.2018թ., 04.06.2018թ., 02.07.2018թ., 01.08.2018թ. կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից մինչև հուլիս ամիսը ներառյալ մատակարարվել, իսկ Պատվիրատուի կողմից ընդունվել են Պայմանագրով նախատեսված ծառայությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա հիմքերը և հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ բավարար հիմքեր առկա չեն «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից «ԿՄՆԵՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման փաստն արձանագրելու և դրա հետևանքով վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16121-18 գրությամբ «Էկո Կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00144918) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**